ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N «ՇՀԾԳԲ-12/7-1»

ք. Երևան «27» «10» 2016թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ Վ. Հովհաննիսյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև՝ Պատվիրատու, մի կողմից և «ՄՈՒՇՈ ՓՐՈԴԱԿՇՆ» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Մ.Գարունյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Կատարող, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (Հավելված N 3) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 3.1):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 5 օրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է 10 000 000 (տաս միլիոն) ՀՀ դրամ: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 10.12.2016թ.:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող Ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.4 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

7.5 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.6 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Կատարողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.7 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.8 Սույն պայմանագիրը կազմված է 15 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N2, N3 և N3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.9 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.10 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.11 Սույն պայմանագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՊՆ Տ և ՀԿ վարչությունը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«ՄՈՒՇՈ ՓՐՈԴԱԿՇՆ» ՍՊԸ
ք. Երևան Բագրևանդի 5	ՀՀ, ք. Երևան, Քեռու փ. 58շ. 18 բն.
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	"Հայ Էկոնոմ Բանկ" ՓԲԸ, Սպանդարյան մ/6
Հ/Հ 900011144079	Հ/Հ 1630481105841
ՀՎՀՀ 00867415	ՀՎՀՀ 00197586
ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ	Տնօրեն
Ա. ԱՎԱԳՅԱՆ	Մ. ԳԱՐՈՒԿՅԱՆ

Հավելված 1
N ՇՀԾՁԲ-12/7-1 ծածկագրով գնման պայմանագրի

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Չափաբաժին 1. Հեռուստատեսային արտադրանքի հետ կապված ծառայություններ.

Զինուժ հեռուստածրագրերի, տոնական հեռարձակումների, հեռուստաֆիլմերի վերլուծական մասի ապահովում, նմանատիպ ծրագրերի հիման վրա նոր ծրագիր-առաջարկների տրամադրում, վերլուծական աշխատանքների կազմակերպում, պատրաստվող նյութերի թեմատիկան և ծավալը որոշում է պատվիրատուն, ամեն հեռուստածրագրի համար պատրաստվող նյութերի քանակը՝ առնվազն 2 հատ, նյութերը տրամադրվում են էլեկտրոնային կրիչով, աշխատանքային օրերի սահմանումը և տևողությունը որոշում է պատվիրատուն՝ համաձայն ՀՀ աշխատանքային օրենսդրության:

Չափաբաժին 2.Հեռուստատեսային արտադրանքի հետ կապված ծառայություններ.

Զինուժ հեռուստածրագրերի, տոնական հեռարձակումների, հեռուստաֆիլմերի վերլուծական մասի ապահովում, նմանատիպ ծրագրերի հիման վրա նոր ծրագիր-առաջարկների տրամադրում, վերլուծական աշխատանքների կազմակերպում, պատրաստվող նյութերի թեմատիկան և ծավալը որոշում է պատվիրատուն, ամեն հեռուստածրագրի համար պատրաստվող նյութերի քանակը՝ առնվազն 2 հատ, նյութերը տրամադրվում են էլեկտրոնային կրիչով, աշխատանքային օրերի սահմանումը և տևողությունը որոշում է պատվիրատուն՝ համաձայն ՀՀ աշխատանքային օրենսդրության:

Չափաբաժին 3.Հեռուստատեսային արտադրանքի հետ կապված ծառայություններ.

«Զինուժ» հեռուստածրագրերի, տոնական հեռարձակումների վարում, նոր ծրագիր-առաջարկների մշակում, վերլուծական աշխատանքների կազմակերպում, ներկայացվող պահանջները՝ իգական սեռի, բարեհաճ արտաքինով, տարիքը՝ 23-28 տարեկան,մասնագիտացված կրթությունը պարտադիր է, աշխատանքային օրերի սահմանումը և տևողությունը որոշում է պատվիրատուն՝ համաձայն ՀՀ աշխատանքային օրենսդրության:

Չափաբաժին 4. Հեռուստատեսային արտադրանքի հետ կապված ծառայություններ՝ ըստ պատվիրատուի կողմից հաստատված էսքիզի

Տաղավար 1. Լրատվական

Տաղավարի կահավորման գլխավոր կոնցեպտը՝ զորքերի կառավարման կետի՝ "Գլխավոր շտաբի" գաղափարն է: Որպես յուրահատուկ լուծում առաջարկվում է տարբերակ, ըստ որի հաղորդավարից բացի, անկախ հաղորդման թեմայից և բովանդակությունից, տաղավարի հետևի պլանում ներկա են նաև զինվորական համազգեստներով 2 կամ 3 կապի օպերատորներ, որոնք էլ ավելի են ընդգծում շտաբի և ինտերակտիվ հեռուստալրատվության մթնոլորտը: Տաղավարի սեղանը սկսվում է տարածքի ետնապատի աջ մասից: Այդ կետում ծառայելով օպերատորների սեղան՝ շարունակվում է ձախ կողմի պատի տակով, լայնանալով հասնում տաղավարի կենտրոն և դառնում հաղորդավարի հիմնական սեղան: Նախատեսված է, որ հաղորդավարը կարող է ոչ միայն նստել իր համար հատկացված աթոռին, այլև տեղաշարժվել ողջ տաղավարով՝ աշխատելով տարբեր տեսախցիկների վրա: Ձախ պատի վրա կառուցված է ծավալային աշխարհի քարտեզը, ռադարի եֆեկտով, լայնաֆորմատ տպագրությամբ, չափսը՝ 120*160սմ: Ռադարի կենտրոնը լինելու է Հայաստանը: Տեղ-տեղ վառվում են մի քանի քաղաքներ կամ պայմանական ռազմական օբյեկտներ հիշեցնող լույսեր, դիոդներ/քանակը՝ ըստ հայեցողության/: Դիմացի պատին նույն տեխնիկական լուծումներով և նույն սահմաններով պատկերված է Հայաստանի քարտեզը, որի շուրջը մանր տառատեսակով պատկերված են պայմանական թվային ինֆորմացիաներ: Հնարավոր է, որ դրանք նույնպես լինեն ինտերակտիվ (վառվող-հանգող): Պատկերված է նաև ՀՀ ՊՆ զինանշանը, ԶԻՆՈՒԺ գրվածքը: Աջ պատը նույնպես ծածկվորված է ինֆորմատիվ մանր էլեմենտներով: Գերակշռող գույները հստակ են՝ ռադարային կանաչ և մետաղական մոխրագույն:

Օգտագործվող նյութերը.
ՊՎՀ 8մմ-ոց, հատակի համար – 45քառ. մ
Մետաղական խողովակ (քառակուսի, ալյումինե)
80մմx40մմ - 150 մ
20մմx20մմ - 200 մ
Տպագրած լուսաթափանց ստամոիդ – 50քառ. մ
Օրգանական ապակի 8մմ – 2քառ. մ
Ապակի 6մմ – 5քառ. մ
Լինոլեում 2մմ – 30քառ. մ
Մոնիտորներ - PHILIPS 223V5LSB2 (10/62) կամ համարժեք մակնիշի, 21.5", լայնաֆորմատ մատրիցա TN=film, կետայնությունը 1920*1080, կողմերի հարաբերակցությունը 16:9, խրոցը D-SUB (VGA), սնուցման բլոկը՝ ներքին, գույնը սև - 5 հատ, LG 25UM58-P կամ համարժեք մակնիշի, 25", լայնաֆորմատ մատրիցա IPS, կետայնությունը 2560*1080, կողմերի հարաբերակցությունը 21:9, խրոցը HDMI, սնուցման բլոկը՝ ներքին, գույնը սև - 1 հատ

Աթոռներ - 1 հատ օֆիսային՝ շարժանիվների վրա, 5 հատ սովորական օֆիսային
Լուսադիոդներ - 40-50 հատ ԼԵԴ

Տաղավար 2. Հյուրերի և երկխոսությունների սենյակ

Գլխավոր կոնցեպտը դաշտային շտաբ հիշեցնող տարածքի կահավորումն է: Տաղավարի կենտրոնում տեղադրված է ապակյա լուսագրասեղան, որի տակից սկսվում են փայտյա հաստ չորսուներից կազմված ոտքեր, որոնք գետնի վրայով դեպի աջ և ձախ շարունակվելով բարձրանում են պատերի վրա: Այս սեգմենտները, անցնելով պատերի վրայով, տեղ-տեղ դառնում են պոլկաներ, որոնց վրա կդրվեն տարբեր զինվորական պարագաներ. սաղավարտներ, զինվորական տափաշշեր և այլն: Իսկ սեղանի վրա կարելի է տեղադրել նաև ՄԵԽՍԱԿ զինվորական հեռախոս: Փայտե էլեմենտների տակից կախված են մի քանի էլեկտրական լամպեր, նաև նաֆթի լամպեր, որոնք նույնպես կընդգծեն նախատեսված ջերմ միջավայրը: Սեղանի շուրջը՝ հետևի մասում տեղադրված է կիսակոր փայտյա նստարան՝ նախատեսված հաղորդավարի և ընդհուպ մինչև 4 հյուրի համար: Հետևի և ձախ կողմի պատերը կազմված են տարբեր մետաղական սեգմենտներից, որոնց շարվածքը հիշեցնում է զինվորական կամուֆլյաժային տեքստուրա: Աջ պատը հատարակ բետոնե պատ է, փոքր-ինչ հնեցված մակերեսով Գունային գամման այստեղ հիմնականում տաք է՝ ստացված նարնջագույն լույսի միջոցով: Հիմնական նյութերը՝ փայտ, մետաղ, ապակի, բետոնի իմիտացիա:

Օգտագործվող նյութերը.
Լամինատ - ՄԴՖ 16մմ, հատակի համար – 40քառ. մ
Փայտե մշակված, լաքապատ տախտակ - 3 քառ.մ
Մետաղական խողովակ (քառակուսի, ալյումին)
40մմx40մմ - 150 մ
20մմx20մմ - 180 մ

Ինքնակպչուն թաղանթ, UV տպագրությամբ 30քառ մ
Օրգանական ապակի 3մմ - 30 քառ.մ
Ապակի 6մմ - 2 քառ.մ
Կավրպլին 2մմ, հատակի համար – 30քառ. մ
Լույսեր՝
սովորական կախովի լամպեր՝ 3 հատ/ձևը՝ ըստ գծագրի/,
սովորական նավթի ճրագ (1 իմիտացիոն լամպ),
սովորական լամպեր/ձևը՝ ըստ գծագրի/՝ 3 հատ:
Կից ներկայացվում են 2 տաղավարների ճշգրիտ գծագրերը՝ չափերը պատկերացնելու համար, ինչպես նաև հնարավոր էսքիզները: Բոլոր գծագրերի չափման միավորը՝ սմ:

Տաղավար 1



Տաղավար 2



Տաղավար 1, ընդհանուր պատկերը վերևից, ձախ և աջ պատերը, դիմացի պատը

Տաղավար









Տաղավար 1

Հիմնական սեղան







Տաղավար 2

Տաղավար (ձախ և դիմային պատեր)





Տաղավար 2 – ընդհանուր պատկերը վերևից

Տաղավար





Տաղավար 2 – ձախ պատի և աջ պատի կառուցվածքը

Տաղավար





Տաղավար 2

Կիսաշրջանաձև նստարան



Ծառայությունների մատուցման վայրը՝ ՀՀ պաշտպանության նախարարություն/Երևան, Բագրևանդ 5/:

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

N	Ծառայության անվանումը	Չափման միավորը	Քանակը	Միավորի գին	Ընդհանուր գին	Ծառայության մատուցումը ըստ 2016թ-ի եռամսյակների
1	Հեռուստատեսային արտադրանքի հետ կապված ծառայություններ՝ այդ թվում	դրամ	1			
	Հեռուստամեկնաբանի ծառայություններ - Զինուժ հեռուստածրագրերի, տոնական հեռարձակումների, հեռուստաֆիլմերի վերլուծական մասի ապահովում, նմանատիպ ծրագրերի հիման վրա նոր ծրագիր-առաջարկների տրամադրում, վերլուծական աշխատանքների կազմակերպում	հատ	1	1 000 000	1 000 000	4-րդ եռամսյակ բայց ոչ ուշ քան 10.12.2016թ.
2	Հեռուստատեսային արտադրանքի հետ կապված ծառայություններ՝ այդ թվում	դրամ	1			
	Հեռուստամեկնաբանի ծառայություններ - Զինուժ հեռուստածրագրերի, տոնական հեռարձակումների, հեռուստաֆիլմերի վերլուծական մասի ապահովում, նմանատիպ ծրագրերի հիման վրա նոր ծրագիր-առաջարկների տրամադրում, վերլուծական աշխատանքների կազմակերպում	հատ	1	1 000 000	1 000 000	4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ քան 10.12.2016թ.
3	Հեռուստատեսային արտադրանքի հետ կապված ծառայություններ՝ այդ թվում	դրամ	1			
	Հեռուստահաղորդավարի ծառայություններ - «Զինուժ» հեռուստածրագրերի, տոնական հեռարձակումների վարում, նոր ծրագիր-առաջարկների մշակում, վերլուծական աշխատանքների կազմակերպում	հատ	1	1 000 000	1 000 000	4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ քան 10.12.2016թ.
4	Հեռուստատեսային արտադրանքի հետ կապված ծառայություններ՝ այդ թվում	դրամ	1	7 000 000	7 000 000	
	Հեռուստատաղավարի ձևավորում - «Զինուժ» ծրագրի հեռուստատեսային տաղավարի ձևավորում	հատ	1			4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ քան 10.12.2016թ.

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն

ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետ

Վ. ՀՈՒՍՀԱՆՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

«ՈՒՇՈ ՊՐՈԴԱԿՇՆ» ՍՊԸ

Տնօրեն

Մ. ԳԱՐՈՒԿՅԱՆ

Հավելված 2
N ՇՀՄԶԲ-12/7-1 ծածկագրով գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Հ/հ	CPV կոդը	Ծառայության անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2016թ., ըստ ամիսների, բայց ոչ ուշ քան 10.12.2016թ.,ընդ որում	
			նոյեմբեր	դեկտեմբեր
1	92221100/1/4/1	Հեռուստատեսային արտադրանքի հետ կապված ծառայություններ (Հեռուստամեկնաբանի ծառայություններ - Զինուժ հեռուստածրագրերի, տոնական հեռարձակումների, հեռուստաֆիլմերի վերլուծական մասի ապահովում, նմանատիպ ծրագրերի հիման վրա նոր ծրագիր-առաջարկների տրամադրում, վերլուծական աշխատանքների կազմակերպում)	1 000 000	1 000 000
2	92221100/2/4/1	Հեռուստատեսային արտադրանքի հետ կապված ծառայություններ (Հեռուստամեկնաբանի ծառայություններ - Զինուժ հեռուստածրագրերի, տոնական հեռարձակումների, հեռուստաֆիլմերի վերլուծական մասի ապահովում, նմանատիպ ծրագրերի հիման վրա նոր ծրագիր-առաջարկների տրամադրում, վերլուծական աշխատանքների կազմակերպում)	1 000 000	1 000 000
3	92221100/3/4/1	Հեռուստատեսային արտադրանքի հետ կապված ծառայություններ (Հեռուստահաղորդավարի ծառայություններ - «Զինուժ» հեռուստածրագրերի, տոնական հեռարձակումների վարում, նոր ծրագիր-առաջարկների մշակում, վերլուծական աշխատանքների կազմակերպում)	1 000 000	1 000 000
4	92221100/4/4/1	Հեռուստատեսային արտադրանքի հետ կապված ծառայություններ (Հեռուստատաղավարի ձևավորում - «Զինուժ» ծրագրի հեռուստատեսային տաղավարի ձևավորում)	7 000 000	7 000 000

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն

ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ

Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

«ՏԵՍՈ ՓՈՐՈՒՆԴՇԵՆ» ՍՊԸ

Տնօրեն

Մ. ԳԱՐՈՒԿՅԱՆ

Հավելված 3
N ՇՀՇՁԲ-12/7-1 ծածկագրով գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ

_____

_____

գտնվելու վայրը _____
հհ _____

_____

հվհհ _____

Պատվիրատու

_____

_____

գտնվելու վայրը _____
հհ_____

_____

հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

" " " 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ ,____ե ,_____ե 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ ,____ե ,_____ե 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

_____

ստորագրություն

_____

ազգանուն, անուն
Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

_____

ստորագրություն

_____

ազգանուն, անուն
Կ.Տ.

ԱԿՏ N

Պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ————(Պատվիրատուի անունը)————ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ————(Կատարողի անունը)————ի (այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ——-ին կնքված N ———— գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. ———-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
Անվանումը	**Քանակական ցուցանիշը (փաստացի)**	**Չափի միավորը**

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

ազգանուն, անուն

ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

ազգանուն, անուն

ստորագրություն